

Դու շառաւիղ երկուց մեծ նախարարութեանց՝ Արծրունեաց եւ Մամիկոնեից, դու պետք էիր լաւ դիտել թէ ինչո՞ւ Բագարատ անյոյս իւր դրացիներուն օգնութենէն գնաց թշնամեաց ծունկը ինկաւ, վասնզի Աշոտ Արծրունեաց Տէր վստահ չէր իւր նախարարց հաւատարմութեան վրայ, եւ թէ վաղը նոյն բախտը կսպասէ բոլոր այդ իշխանաց, որ այս խեղճ Յայաստանի ո՛չ Տեարքն են՝ այլ բռնաւորք։ Վասնզի չեն կարող գնա պաշտպանել օտարէն, եւ ոչ իրենց կոյր կ'իրքերէն, այլ անարգ եւ փոքրիկ փառասիրութեամբ անձանց եւ ազգին խորխորատ կը փօրէն։ Զաջք, անպարտելիք միմեանց դէմ։ անխիղճ կը թափեն իրենց հպատակաց արիւնը, կավարեն հակառակորդին երկիրը, որ դարձեալ հայ է։ Բայց ի՞նչ է հայը դոցայ աչքին, ոչինչ։— Աս բաները տեսնելուս համար է, իշխան քաջ, որ դառնաց եալ այս աղետից վրայ այդպիսի ծանր խօսքեր ըսի։ ո՛չ, հաւատա թէ ոչ նախանձ մեծութեան, ոչ փափագ իշխանութեան երբեք զիս չեն փորձել։ միայն կը ցավիմ աս իմ ազդիս վրայ, որ հլու հնազանդ իւր մարմնաւոր եւ հոգեւոր իշխանաց ամէն օր կը կորչի մարմնով եւ հոգովով։

Լռութիւն մը տիրեց այս երկայն խօսակցութեան վրայ, ժողովրդեան մարդը այս խօսքերը զրուցելէն վերջ, դէտին սեւեռեալ կը նայէր, ազնուական երիտասարդը նոյնպէս աչքերը գետնէն չէր վերցնէր։ Պահ մը այսպէս կ'ենալէն վերջ իշխանը իբր թէ քունէ զարթած՝ միտքը ուրիշ բան մը եկաւ։ առանց պատասխան տօալու հրաժարական ողջոյնը տուաւ, ձեռքը կուրծքին դրաւ եւ ակնարկի հրաման ըրաւ, ձին մերձ բերուեցաւ, հեծաւ Յօլակին վրայ եւ դէպ արեւելք շրջեց նրա գլուխը։ եւ իւր ետեւէն կ'երթային երեք սպասաւորներն եւ Արծրունեաց ազատեալ պատանդներն նոյն ճամփան։